Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
2026-2027 ՈՒՍՏԱՐՎԱ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ
ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԱՆՑԱԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

021503.02.6 «Ռեժիսուրա»

Ուսուցումը երկաստիճան է՝ բակալավրիատ և մագիստրատուրա:

Բակալավրիատում ուսման տևողությունը չորս տարի է: Շրջանավարտն ստանում է արվեստի բակալավրի որակավորում

Դիմորդը պետք է օժտված լինի վառ ստեղծագործական երևակայությամբ և բեմական արտահայտչաձևերի բազմերանգությամբ:

Մեծ նշանակություն ունեն դիմորդի դերասանական և երաժշտական, ինչպես նաև կազմակերպչական ունակությունները, ինքնուրույն մտածելակերպը: Ցանկալի է, որ դիմորդն ունենա գեղարվեստական ինքնագործունեությունում աշխատելու փորձ:

Դիմորդները մասնագիտական քննություն են հանձնում հետևյալ առարկաներից.

1-ին քննություն - «Դերասանի վարպետություն» (բանավոր)

Քննության ընթացքում դիմորդն իր ընտրությամբ ներկայացնում է՝

" **էտյուդ**՝ կյանքից վերցրած մի փոքր դրվագ՝ համապատասխան վերաբերմունքով
" **արտասանում է** գրական տարբեր ժանրերի ստեղծագործություններ՝ բանաստեղծություն, առակ, հատված արձակ գործից կամ որևէ մենախոսություն
" **ստուգվում են** նաև դիմորդի երաժշտական լսողությունը և ռիթմի ունակությունները:

Դիմորդին կարող են հանպատրաստից հանձնարարվել նաև գործնական այլ առաջադրանքներ:

2-րդ քննություն - «Ռեժիսուրա» (գրավոր և բանավոր)

Քննությունը բաղկացած է երկու փուլից, որն անցկացվում է նույն օրը հետևյալ ընթացակարգով՝

Գրավոր փուլ

Դիմորդներն իրենց ցանկությամբ ընտրում են որևէ պիես կամ այլ ժանրի գրական ստեղծագործություն և մեկ ակադեմիական ժամվա (40 րոպե) ընթացքում ներկայացնում նրա էքսպլիկացիան (ենթարկում ռեժիսորական վերլուծության): Վերլուծության նյութ կարող է հանդիսանալ կայքում ներկայացված գրականության ցանկից որևէ պիես կամ անվանի արվեստագետի ստեղծագործական դիմանկարը՝ բացահայտելու դիմորդի մտածելակերպը, թեման վերլուծելու ունակությունը, նրա պատկերավոր երևակայությունը:

Բանավոր փուլ

Հարցազրույց դիմորդի ներկայացրած էքսպլիկացիայի շուրջ:

Այնուհետև ըստ կայքում ներկայացված հարցաշարի՝ ստուգվում են դիմորդի տարրական գիտելիքները արվեստի և գրականության, թատերական կյանքի և արդի ժամանակաշրջանի կարևոր իրադարձությունների շուրջ:

Քննությունը գնահատվում է մեկ ընդհանուր գնահատականով:

ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

«Դերասանի վարպետություն» (բանավոր)

1 – 7 միավոր՝ երբ դիմորդի բեմական խոսքը կամ դերասանական էտյուդը թերարժեք են, կատարման առումով անհետաքրքիր, դժգույն և կեղծ: Երաժշտական (ռիթմիկայի) վարժությունները փաստում են, որ նա զուրկ է երաժշտական լսողությունից և ռիթմի զգացումից:

8 – 12 միավոր՝ երբ դիմորդը ներկայացնում է միջակ արտահայտչամիջոցներ. որոշ չափով ընկալում է կարդացած նյութը և բավարարում է «Բեմական խոսք» առարկայի համար պահանջվող միջին մակարդակը: Ներկայացրած դերասանական էտյուդից երևում է, որ նա զուրկ չէ ռեժիսորական մտածելակերպից և աշխատում է լինել ճշմարիտ իր ստեղծագործական խնդիրների մեջ:

13 – 17 միավոր՝ երբ դիմորդի արտասանությունն արտահայտիչ է, իմաստավորված, հասկանում է կարդացած նյութի իմաստը: Ներկայացրած էտյուդը համոզիչ է, հետաքրքիր մտածելակերպով և մատուցմամբ: Ունի երաժշտական որոշ ունակություններ: Հանձնաժողովի կողմից առաջարկված լրացուցիչ վարժությունների ժամանակ կարողանում է կենտրոնանալ և հնարավորինս ընկալել այն ու կատարել:

18– 20 միավոր՝ երբ դիմորդի ներկայացրած ծրագիրը լիարժեք բավարարում է առաջարկված պահանջներին, կատարողական առումով հետաքրքրական է, ցայտուն, հարուստ բեմական արտահայտչամիջոցներով: Օժտված է վառ ստեղծագործական երևակայությամբ ու ճաշակով: Շնորհաշատ է ռիթմի և երաժշտության առումով, առաջարկված լրացուցիչ վարժությունները կատարում է արտահայտիչ ու համոզիչ:

«Ռեժիսուրա» (գրավոր և բանավոր)

1 – 7 միավոր՝ երբ դիմորդը բացարձակապես անպատրաստ է ներկայացել քննությանը, գրավոր աշխատանքում չի կարողացել բացահայտել ընտրած թեման, մտքերի ձևակերպումը սխալ է, անհեթեթ, չունի որևէ ռեժիսորական մտածելակերպ և չի պատասխանում հարցատոմսի հարցերին:

8 – 12 միավոր՝ երբ դիմորդն իր գրավոր աշխատանքում մոտեցել է ընտրած թեմայի բացահայտմանը, նշմարվում են ստեղծագործական երևակայության որոշ տարրեր, կարողանում է ընտրած թեմայի շուրջ տալ մեկնաբանություններ և պատասխանում է հարցատոմսի հարցերին:

13 – 17 միավոր՝ երբ դիմորդն իր գրավոր աշխատանքում հիմնականում կարողացել է բացահայտել ընտրած թեման, համոզիչ կերպով մեկնաբանում է այն և հիմնականում պատասխանում հարցատոմսի հարցերին:

18– 20 միավոր՝ երբ դիմորդը ներկայացրել է լիարժեք գրավոր աշխատանք, յուրովի է մեկնաբանում իր ընտրած թեման, լի է ստեղծագործական հետաքրքիր մտահղացումներով և հարցատոմսի, ինչպես նաև լրացուցիչ հարցերին տալիս է լիարժեք պատասխան:

ՀԱՐՑԱՇԱՐ

Գրական ստեղծագործություններ

1. Գ.Սունդուկյան՝ «Պեպո», « Խաթաբալա»
2. Ալ.Շիրվանզադե՝ «Պատվի համար»
3. Հ.Պարոնյան՝ «Պաղտասար ախպար», «Ատամնաբույժն արևելյան»
4. Լ.Շանթ՝ «Հին աստվածներ»
5. Դ.Դեմիրճյան՝ «Քաջ Նազար»
6. Ն.Զարյան՝ «Արա Գեղեցիկ»
7. Պ.Զեյթունցյան՝ «Ոտքի, դատարանն է գալիս»
8. Վ..Շեքսպիր՝ «Օթելլո», «Ռոմեո և Ջուլիետ», «Համլետ»
9. Ն.Գոգոլ՝ «Ռևիզոր» (»Վերաքննիչ»)
10. Ա.Չեխով՝ «Ճայը»
11. Ա.Գրիբոյեդով՝ «Խելքից պատուհասը»
12. Վ.Սարոյան՝ «Իմ սիրտը լեռներում է»

Մասնագիտական ընդհանուր հարցեր

1. Կ.Ստանիսլավսկի. գործունեությունը
2. Արվեստի տեսակներն ու առանձնահատկությունները
3. " XX դարի հայ թատերարվեստի կամ կինոարվեստի անվանի դերասան-
   a. դերասանուհիների ստեղծագործական դիմանկարները
4. XX դարի հայ կերպարվեստի անվանի ներկայացուցիչների ստեղծագործական
   a. դիմանկարները

Դիմորդի ընդհանուր գիտելիքները ստուգող հարցեր

1. Երևանը և նրա տեսարժան վայրերը
2. Երևանի թատրոնները
3. Սիրելի դերասանը, երգահանը, նկարիչը

Առանձին հանձնարարություններ

1. Տրված թեմայով կամ բառերով հորինել որևէ պատմություն
2. Հարցեր դիմորդի հիշողության և երևակայության շուրջ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Լ.Հախվերդյան - Հայ թատրոնի պատմություն, Ե., 1980
- Կ.Ստանիսլավսկի – «Իմ կյանքը արվեստում» -